ՍԱՂՄՈՍ 37

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋԸ վստահող-ների ապահովու-թյունը և ամբա-րիշտների անապա-հովությունը <u>MT ներածություն</u> Դավթի *Սաղմոսը*	Արդարի ժառան-գությունը և ամ-բարշտի կորուստը	Ամբարիշտների հա-մար հատուցման հաստատությունը (Իմաստության Սաղմոս)	Ամբարշտի և բարի մարդու ճակատագիրը	Ճիտակի և ամբարշ-տի ճակատագիրը (Ակրոստիկոս)
37:1-6	37:1-2	37:1-2	37:1-2	37:1-2 (*Ալեֆ*)
	37:3-4	37:3-4	37:3-4	37:3-4 (*Բեթ*)
	37:5-6	37:5-6	37:5-6	37:5-6 (*Գիմել*)
37:7-11	37:7-11	37:7	37:7	37:7 (*Դալեթ*)
		37:8-9	37:8-9	37:8-9 (*Հի*)
		37:10-11	37:10-11	37:10-11 (*Վավ*)
37:12-15	37:12-15	37:12-13	37:12-13	37:12-13 (*Զային*)
		37:14-15	37:14-15	37:14-15 (*Խեթ*)
37:16-22	37:16-17	37:16-17	37:16-17	37:16-17 (*Տեւո*)
	37:18-20	37:18-19	37:18-20	37:18-19 (*Յոդ*)
		37:20		37:20 (*Քաֆ*)
	37:21-22	37:21-22	37:21-22	37:21-22 (*Լամեդ*)
37:23-26	37:23-24	37:23-24	37:23-24	37:23-24 (*Մեմ*)
	37:25-26	37:25-26	37:25-26	37:25-26 (*Նուն*)
37:27-34	37:27-29	37:27-29	37:27-29	37:27-28բ (*Սամեխ*)
				37:28գ-29 (*Ային*)
	37:30-31	37:30-31	37:30-31	37:30-31 (*Փե*)
	37:32-33	37:32-33	37:32-33	37:32-33 (*Զադի*)
	37:34-36	37:34	37:34	37:34 (*Քոֆ*)
37:35-40		37:35-36	37:35-36	37:35-36 (*Ռեշ*)
	37:37-38	37:37-38	37:37-38	37:37-38 (*Շին*)
	37:39-40	37:39-40	37:39-40	37:39-40 (*Թավ*)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսը հետ ու առաջ է ցատկում հավատարիմ և անհավատ հետևորդներին զգուշացնելու և նկարագրելու միջև: Աստվածաբանական հարցը ամբարշտի բարգավաճումն է (տես՝ Սաղմոս 73, Ամբակում):

Բ. ՅԱՀՎԵՆ բնութագրվում է մի քանի տարբեր կերպերով: Նա պահպանում է հավատարիմներին և կործանում անհավատներին:

Գ. Սա ակրոստիկոս սաղմոս է: Յուրաքանչյուր առաջարկված տառը երկու համար ունի (այսինքն՝ 4 տող)՝ բացի *Քոֆից*՝ 37:34, որն ունի երեք տող:

Դ. Այս Սաղմոսի աստվածաբանությունը երկիրը ժառանգելու մասին է (այսինքն՝ Քանանը) և բարգավաճումը՝ Ծննդ. 12:1-3-ի հիման վրա (ՅԱՀՎԵԻ Աբրահամին տված սկզբնական կանչը և խոստումը), որը զարգանում է Մովսեսի օրոք և դառնում Մովսիսական ուխտ: Այն ունի օրհնություններ հնազանդության համր և անեծքներ՝ անհնազանդության համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30 լավ ամփոփման համար):

ՅԱՀՎԵՆ ուզեց հայտնել Իրեն աշխարհին Իր ուխտի հատուկ ժողովրդի՝ Իսրայելի միջոցով: Իսրայելը պետք է հայտներ Նրա շնորհքը, ողորմությունը և սերը իր բարգավաճման և աստվածահաճո մշակույթի միջոցով: Ինչպես որ հայտնի է պատմական գրքերից (այսինքն՝ Հեսու-4 Թագավորաց), Իսրայելի անհնազանդությունը խեղաթյուրեց այս նպատակը: Իսրայելը դատվեց և ուխտը քանդվեց (այսինքն՝ գերությունը): Հետևաբար ՅԱՀՎԵՆ ստիպված էր սկսելու մի «նոր ուխտ» (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38) հիմնված Իր շնոհքի և գործողությունների վրա, ոչ թե ընկած՝ մեղավոր մարդկության հնազանդության (այսինքն՝ Հիսուսի Քրիստոսի ավետարանը արձանագրված ՆԿ-ում): Այս նոր ուխտի խոստումներով ազգային Իսրայելը չեղարկվեց: Ստորև ես տալիս եմ մի Հատուկ Թեմա, որը փորձում է արձանագրել այս փոփոխությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԸ ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ Ի ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԻ (Հայտնության համար «Կարևոր Ներածություն»)

SPECIAL TOPIC: OLD TESTAMENT PREDICTIONS OF THE FUTURE VS. NEW TESTAMENT PREDICTIONS ("Crucial Introduction" to Revelation)

Էսկատոլոգիայի իմ ուսումնասիրության տեսանկյունից ես հասկացել եմ, որ շատ Քրիստոնյաներ չունեն կամ չեն ուզում զարգացած, համակարգված, վերջին ժամանակների ժամանակագրություն: Կան Քրիստոնյաներ, ովքեր կենտրոնանում կամ մասնագիտանում են Քրիստոնեության այս ոլորտում աստվածաբանական, հոգեբանական կամ հարանվանական նկատառումներով: Այս Քրիստոնյաները կարծես թե դառնում են գերված այն մտքով, թե ինչպես է ամեն բան վերջանալու, և ինչ-որ տեղ բաց են թողնում ավետարանի հրատապությունը: Հավատացյալները չեն կարող ազդել Աստծո վախճանաբանական (վերջին ժամանակի) գրաֆիկի վրա, սակայն նրանք կարող են մասնակից դառնալ ավետարանի լիազորության մեջ (տես՝ Մատթ.28:19-20, Ղուկ.24:46-47, Գործք 1:8): Հավատացյալների մեծամասնությունը պնդում է Քրիստոսի Երկրորդ Գալուստը և վերջին ժամանակների Աստծո խոստումների կուլմինացիան: Մեկնաբանական խնդիրներ են բարձրանում մի քանի սուրբգրային պարադոքսներից այս ժամանակավոր կուլմինացիան հասկանալու հարցում (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԸ</u>):

1. Հին Կտակարանի մարգարեական օրինակների և Նոր Կտակարանի առաքելական օրինակների միջև լարվածությունը
2. Աստվածաշնչի միաստվածության (մեկ Աստված բոլորի համար) և Իսրայելի ընտրության (հատուկ ժողովուրդ) միջև լարվածությունը
3. Սուրբգրային ուխտերի և խոստումների պայմանական կողմերի («եթե..ապա») և մեղավոր մարդկությանը փրկելու Աստծո անվերապահ հավատարմության միջև լարվածությունը
4. Մերձավոր Արևելքի գրական ժանրերի և ժամանակակից արևմտյան գրական օրինակների միջև լարվածությունը
5. Աստծո Արքայությունը որպես ներկան ի հակադրություն այն ապագայումի միջև լարվածությունը:
6. Քրիստոսի մոտալուտ գալստյան հավատքի և որոշ դեպքերը առաջին հերթին պետք է տեղի ունենան հավատքի միջև լարվածությունը:

Եկե՛ք մեկ առ մեկ քննարկենք այս լարվածությունները:

ԱՌԱՋԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (ՀԿ ցեղային, ազգային և աշխարհագրական կատեգորիաները ի հակադրություն ամբողջ աշխարհում բոլոր հավատացյալների)

ՀԿ-յան մարգարեները կանխասում էին Հրեական Թագավորության վերականգնումը Պաղեստինում՝ կենտրոնացած Երուսաղեմում, որտեղ երկրի բոլոր ազգերը հավաքվելու են փառաբանելու և ծառայելու Դավթի սերնդից Իշխանին, սակայն ո՛չ Հիսուսը, ո՛չ էլ ՆԿ-յան Առաքյալները երբևէ չկենտրոնացան այս ծրագրի վրա: Արդյո՞ք ՀԿ-ը ներշնչված չէ (տես՝ Մատթ. 5:17-19): Արդյո՞ք ՆԿ-ի հեղինակները բաց են թողել կարևոր վերջին ժամանակների դեպքերը:

Գոյություն ունեն տեղեկատվության մի քանի աղբյուրներ աշխարհի վերջին ժամանակի վերաբերյալ:

1. ՀԿ-ի մարգարեները (Եսայի, Միքիա, Մաղաքիա)
2. ՀԿ-ի ապոկալիպտիկ հեղինակները (տես՝ Եզեկիել 37-39, Դանիել 7-12, Զաքարիա)
3. միջկտակարանյան, անկանոն հրեական ապոկալիպտիկ հեղինակները (ինչպես 1 Ենովքը, որից մեջբերվում է Հուդայի գրքում):

4. Հիսուսն Ինքը (տես՝ Մատթեոս 24, Մարկոս 13, Ղուկաս 21)
5. Պողոսի թղթերը (տես՝ 1 Կորնթացիների 15, 2 Կորնթացիների 5, 1 Թեսաղոնիկեցիների 4-5, 2 Թեսաղոնիկեցիների 2)
6. Հովհաննեսի թղթերը (1 Հովհաննես և Հայտնություն)

Արդյո՞ք այս բոլորը հստակ սովորեցնում են վերջին ժամանակների դեպքերը (դեպքերը, ժամանակագրությունը և անձանց): Եթե ոչ, ինչո՞ւ: Արդյո՞ք նրանք բոլորն էլ ներշնչված չէին (բացառությամբ հրեական միջկտակարանյան գրերը):

Հոգին ճշմարտություններ է հայտնել ՀԿ-յան հեղինակներին իրենց հասկանալի տերմիններով և կատեգորիաներով: Սակայն, պրոգրոսիվ հայտնության միջոցով Հոգին ընդլայնել է այս ՀԿ-յան վախճանաբանական գաղափարները մինչև իսկ տիեզերական մասշտաբի («Քրիստոսի խորհուրդը», տես՝ Եփես. 2:11-3:13): Ահա մի քանի հարմար օրինակներ՝

1. Երուսաղեմ քաղաքը ՀԿ-ում կիրառվում է որպես Աստծո ժողովրդի նկարագրություն (Սիոն), սակայն պրոեկտվում է ՆԿ-ում բոլոր ապաշխարող, և հավատացող մարդկանց Աստծո կողմից ընդունված լինելն արտահատող տերմին (Հայտնություն 21-22-ի «նոր Երուսաղեմը»): Բառացի, ֆիզիկական քաղաքի աստվածաբանական վերծանումը որպես մի նոր Աստծո ժողովուրդ (հավատացյալ հրեաները և հեթանոսները) քողարկված է Ծնն. 3:15-ում մեղավոր մարդկության փրկագործության Աստծո խոստման մեջ, նախքան նույնիսկ հրեաներ կամ հրեական մայրաքաղաք գոյություն ունենալը: Նույնիսկ Աբրահամի կանչը (տես՝ Ծնն. 12:1-3) ներառեց հեթանոսներին (տես՝ Ծնն. 12:3, Ելից 19:5): Տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>:
2. Աստծո ժողովրդի թշնամիները ՀԿ-ում Հնագույն Մերձավոր Արևելքի շրջապատող երկրներն էին, սակայն ՆԿ-ում նրանք տարածվեցին ամբողջ անհավատ հակա- Աստված, սատանայից ներշնչված ժողովրդի վրա: Պատերազմը տեղափոխվեց աշխարհագրական, տարածաշրջանային ընդհարումից մինչև համաշխարհային, տիեզերական ընդհարման (տես՝ Կողոսացիների թուղթը):
3. Երկիր ունենալու խոստումը, որն այնքան անբաժանելի էր ՀԿ-ում (Ծննդոցի Նահապետական Խոստումները, տես՝ Ծնն. 12:7, 13:15, 15:7, 15, 16, 7:8) այժմ դարձել է ամբողջ աշխարհը: Նոր Երուսաղեմը իջնում է վերստեղծված երկրի վրա, ոչ թե միայն և բացառապես Մերձավոր Արևելք (տես՝ Հայտնություն 21-22):
4. Մի քանի այլ ՀԿ-յան մարգարեական գաղափարներ, որոնք ավելի են ընդլայնվել, հետևյալն են՝

   ա. Աբրահամի սերունդը այժմ հոգևորապես թլփատվածներն են (տես՝ Հռոմ. 2:28-29)

   բ. ուխտի ժողովրդի մեջ այժմ ներառված են նաև հեթանոսները՝
      1) Ովսեա 1:10, 2:23, մեջբերված՝ Հռոմ. 9:24-26-ում
      2) Ղևտ. 26:12, Ելից 29:45, մեջբերված 2 Կորնթ. 6:16-18
      3) Ելից 19:5, 2 Օր. 14:2, մեջբերված Տիտոս 2:14-ում

   գ. տաճարն այժմ Հիսուսն է (տես՝ Մատթ. 26:61, 27:40, Հովհ. 2:19-21) և Նրա միջոցով տեղական եկեղեցին (տես՝ 1 Կորնթ. 3:16) կամ անհատ հավատացյալը (տես՝ 1 Կորնթ. 6:19)

   դ. անգամ Իսրայելը և նրան բնութագրող ՀԿ-յան արտահայտությունները այժմ վերաբերում են Աստծո ամբողջ ժողովրդին
      1) «Իսրայել», տես՝ Հռոմ. 9:6, Գաղ. 6:16
      2) «քահանայական թագավորություն», տես՝ 1 Պետ. 2:5, 9-10, Հայտն. 1:6

Մարգարեական օրինակը կատարվեց, տարածվեց, և այժմ ավելի ներառական է: Հիսուսը և Առաքելական հեղինակները չեն ներկայացնում վերջին ժամանակը այնպես, ինչպես ՀԿ-յան մարգարեները (տես՝ Մարթին Ուինգարդենը *Թագավորության ապագան մարգարեության և իրականացման մեջ*): Ժամանակակից մեկնաբանները, որոնք փորձում են ՀԿ-ի օրինակը բառացիորեն կամ անվանական փոփոխության ենթարկել Հայտնության գիրքը որպես հրեական գիրք և հարկադրել դրա նշանակությունը Հիսուսի և Պողոսի ատոմացված, երկիմաստ արտահայտությունները: ՆԿ-ի հեղինակները չեն ժխտում ՀԿ-յան մարգարեներին, այլ ցույց էին տալիս դրանց տիեզերական առնչությունը: Գոյություն չունի կազմակերպված, տրամաբանական մի համակարգ Հիսուսի և Պողոսի էսկատոլոգիայի համար: Նրանց առաջնային նպատակը փրկության կամ հովվական նկատառումներով է (այսինքն՝ 1 Կորնթ. 15:58, 1 Թեսաղ. 4:18):

Այնուհանդերձ, նույնիսկ ՆԿ-ի մեջ լարվածություն կա: Գոյություն չունի հստակ վախճանաբանական դեպքերի հստակ համակարգում: Հայտնության գիրքը վերջը նկարագրելու համար Հիսուսի ուսմունքները գործածելու փոխարեն շատ կերպերով զարմանալիորեն կիրառում է ՀԿ-յան մեջբերումներ (տես՝ Մատթևոս 24, Մարկոս 13): Այն հետևում է Եզեկիելի, Դանիելի և Զաքարիայի միջոցով նախաձեռնած գրական ժանրին, սակայն ձևավորված միջկտակարանյան ժամանակաշրջանում (Հրեական ապոկալիպտիկ գրականություն): Սա հնարավոր է եղել է Հին ու Նոր Ուխտերը իրար կապելու Հովհաննեսի կերպը: Այն ցույց է տալիս մարդու հնամենի ապստամբության կերպերը և Աստծո նվիրումը փրկելու համար: Սակայն պետք է նշել, որ չնայած Հայտնությունը գործածում է ՀԿ-յան լեզուն, անձանց, դեպքեր, այն վերամեկնաբանում է դրանք առաջին դարի Հռոմի լույսի ներքո (տես՝ Հայտնություն 17):

ԵՐԿՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (միաստվածությունը հակադրված ընտրյալ ժողովրդի հետ)

Սուրբգրային շեշտադրությունը դրված է միակ անձնական, հոգևոր, արարիչ-փրկիչ Աստծո վրա է (տես՝ Ելից 8:10, Եսայի 44:24, 45:5-7,14,18,21-22, 46:9, Երեմ. 10:6-7): ՀԿ-ի յուրահատկությունն իր օրերում միաստվածությունն է (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>): Շրջապատող բոլոր ազգերը բազմաստված էին: Աստծո մեկությունը ՀԿ-ի հայտնության սիրտն է (տես՝ 2 Օր. 6:4): Արարչագործությունը Աստծո և Իր պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդկանց միջև փոխհարաբերության նպատակով բեմահարթակ է (տես՝ Ծննդ. 1:26-27): Սակայն, մարդկությունը ապստամբեց, Աստծո սիրո, առաջնորդության և նպատակի դեմ մեղք գործեց (տես՝ Ծննդոց 3): Աստծո սերը և նպատակը այնքան կայուն ու հաստատ էր, որ Նա խոստացավ փրկել անկում ապրած մարդկությանը (տես՝ Ծննդ. 3:15, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ</u>):

Լարվածությունը գլուխ է բարձրացնում, երբ Աստված ընտրում է գործածել մի մարդու, մի ընտանիքի, մի ազգի, որպեսզի ձեռք մեկնի մարդկության մյուս մասին: Աստծո կողմից Աբրահամի (տես՝ Ծննդոց 12, 15, 17, 18) և հրեաների ընտրությունը, որպես քահանաների թագավորություն (տես՝ Ելից 19:4-6) պատճառ հանդիսացավ ծառայելու փոխարեն հպարտանալու, ներառվելու փոխարեն՝ բացառվելու: Աստծո կողմից Աբրահամին կանչելը իր մեջ բովանդակում էր նպատակային օրհնություն ամբողջ մարդկության համար (տես՝ Ծննդ. 12:3): Պետք է հիշել և շեշտադրել, որ ՀԿ-ի ընտրությունը ծառայության համար էր, ոչ թե փրկության: Ամբողջ Իսրայելը երբեք էլ Աստծո առջև շիտակ չի եղել, երբեք էլ հավիտենապես չի փրկվել՝ հիմնվելով միայն իրենց ծնունդով հրեա լինելու փաստի վրա (տես՝ Հովհ. 8:31-59, Մատթ. 3:9), սակայն անձնական հավատքով և հնազանդությամբ (տես՝ Ծննդ. 15:6, մեջբերված է Հռոմ. 4:3, 9, 22, Գաղ. 3:6-ում): Իսրայելը կորցրեց իր առաքելությունը (այժմ եկեղեցին է քահանայական թագավորությունը, տես՝ Հայտն. 1:6, 1 Պետ. 2:5,9) և լիազորությունը փոխեց արտոնության, ծառայության հատուկ դիրքի: Աստված մեկին ընտրելով ընտրեց բոլորին:

ԵՐՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (պայմանական ուխտերը ի դեմս անվերապահ ուխտերի)

Գոյություն ունի աստվածաբանական լարվածություն կամ պարադոքս պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև: Անկասկած ճիշտ է, որ Աստծո փրկարար նպատակը՝ ծրագիրը անպայմանական է՝ անվերապահ (տես՝ Ծննդ. 15:12-21): Սակայն, մարդուն լիազորված պատասխանը միշտ էլ պայմանական է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

«Եթե... ապա» ձևաչափը առկա է թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում: Աստված հավատարիմ է. մարդկությունը անհավատարիմ: Այս լարվածությունը հանգեցրեց շատ մեծ շփոթության: Մեկնաբանները հակված են կենտրոնանալու «դիլեմայի» միայն մի կողմին, Աստծո հավատարմությունը կամ մարդու ջանքերը, Աստծո ինքնիշխանությունը կամ մարդու ազատ կամքը: Երկուսն էլ սուրբգրային են և անհրաժեշտություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԼԱՆՍԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (սուրբգրային պարադոքսներ)

Սա առնչվում է էսկատոլոգիայի, Աստծո Իսրայելին տված խոստումների հետ: Եթե Աստված խոստանում է՝ կատարում է: Աստված կապված է Իր խոստումներին, Նրա հեղինակությունն է ներգրավված (տես՝ Եզեկ. 36:22-38): Պայմանական և անպայմանական ուխտերը հանդիպում են Քրիստոսի մեջ (տես՝ եսայի 53), ոչ թե Իսրայելի մեջ: Աստծո մեծագույն հավատարմությունը ընկած է բոլորի փրկագործության մեջ, որոնք կապաշխարեն և կհավատան, ոչ թե այն բանի, թե ով է եղել քո հայրը կամ մայրը: Քրիստոսն է, և ոչ թե Իսրայելը, Աստծո բոլոր ուխտերի և խոստումների առանցքը՝ բանալին: Եթե գոյություն ունի որևէ աստվածաբանական փակագիծ Աստվածաշնչում, դա Եկեղեցին չէ, այլ Իսրայելը (տես՝ Գործք 7, Գաղատացիների 3, Եբրայեցիների ամբողջ գիրքը):

Ավետարանի քարոզչության համաշխարհային առաքելությունը փոխանցվել է Եկեղեցուն (տես՝ Մատթ. 28:19-20, Ղուկաս 24:47, Գործք 1:8): Այն դեռևս պայմանական ուխտ է: Սա չի ենթադրում, որ Աստված ամբողջովին մերժել է հրեաներին (տես՝ Հռոմեացիների 9-11): Տեղ և նպատակ կա վերջին ժամանակի հավատացյալ Իսրայելի համար (տես՝ Զաք. 12:10):

ՉՈՐՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (Մերձավոր Արևելքի գրական նմուշները ի դեմս արևմտյանի)

Ժանրը կարևորագույն տարր է Աստվածաշնչի ճիշտ մեկնության համար (տես՝ Ֆիի և Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով*): Եկեղեցին զարգացավ արևմտյան (հունական) մշակույթի միջավայրում: Արևելյան գրականությունը շատ ավելի փոխաբերական է, այլաբանական և սիմվոլիկ, քան ժամանակակից, արևմտյան մշակույթի գրական ժանրերը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (սուրբգրային պարադոքսներ)): Այն կենտրոնանում է մարդկանց, հանդիպումների և դեպքերի վրա շատ ավելին, քանի կանխաենթադրական ճշմարտությունների: Քրիստոնյաները հանցավոր են եղել իրենց պատմությունը և գրական ժանրերը սուրբգրային մարգարեություն մեկնաբանելու հարցում (թե՛ ՀԿ և թե՛ ՆԿ): Յուրաքանչյուր սերունդ և աշխարհագրական միավոր գործածել է իր մշակույթը, պատմությունը և բառացիությունը Հայտնությունը մեկնաբանելու համար: Նրանցից յուրաքանչյուրն էլ սխալվել է: Տգիտություն է մտածել, որ արդի արևմտյան մշակույթն է աստվածաշնչյան մարգարեության առանցքը:

Ժանրը, որում բնագրի ներշնչված հեղինակը որոշում է գրել, մի գրական պայմանագիր է ընթերցողի հետ (Բրյուս Քորլի): Հայտնության գիրքը պատմական դեպքեր չեն: Այն հանդիսա-

նում է նամակների հավաքածու (1-3 գլուխները), մարգարեություն, և հիմնականում ապոկալիպտիկ գրականություն: Որքան որ սխալ է Աստվածաշնչից պահանջելը, որ ասի ավելին, քան բնագրի հեղինակն էր մտադիր ասելու, այնքան էլ սխալ է պահանջել ասել ավելի քիչ, քան որ նա մտադիր էր ասել: Մեկնաբանների տգիտությունը և դոգմատիզմը անգամ շատ ավելի անտեղին է Հայտնության գքրի դեպքում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊՈԿԱԼԻՊՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

Եկեղեցին երբեք չի համաձայնվել Հայտնության պատշաճ մեկնաբանության հետ: Ես աշխատում եմ լսել և գործ ունենալ ամբողջ Աստվածաշնչի հետ, ոչ թե մի քանի ընտրված մասերի հետ: Աստվածաշնչի արևելյան մտայնությունը ներկայացնում է ճշմարտությունը լարվածությամբ լի զույգերով: Մեր արևմտյան ձևակերպումը կանխաենթադրական ճշմարտության նկատմամբ անվավեր չէ, բայց և անհավասարակշիռ է: Կարծում եմ հնարավոր է հեռացնել առնվազն Հայտնությունը մեկնելու որոշ փակուղիները՝ նշելով դրանց փոփոխվելու նպատակը հավատացյալների հաջողակ սերունդներին: Մեկնաբաններից շատերին ակնհայտ է, որ Հայտնությունը պետք է մեկնաբանվի իր օրերին և իր ժանրին համապատասխան: Հայտնության պատմական մոտեցմանը պետք է վերաբերվել այնպես, ինչպես առաջին ընթերցողներն են վերաբերվել, և հնարավոր է հասկացել (տես մեկնաբանության շուրջ իմ սեմինարը, «Աստվածաշնչի Մեկնության Սեմինար»): Շատ առումներով արդի մեկնաբանները կորցրել են գքրի սիմվոլներից շատերի նշանակությունը:

Հայտնության սկզբնական հիմնական շեշտադրությունը եղել է քաջալերել հալածվող հավատացյալներին: Այն ցույց էր տալիս Աստծո վերահսկողությունը պատմության վրա (ինչպես ՀԿ-ի մարգարեները), այն հաստատեց, որ պատմությունը շարժվում է դեպի նշանակված վախճանը՝ դատաստանին կամ օրհնությանը (ինչպես ՀԿ-ի մարգարեները): Այն առաջին դարում հրեական ապոկալիպտիկ տերմիններով հաստատեց Աստծո սիրո, ներկայության, զորության և ինքնիշխանության մասին:

Այն գործում է այս նույն աստվածաբանական կերպերով հավատացյալների յուրաքանչյուր սերունդների համար: Պատկերում է բարու և չարի տիեզերական պայքարը (տես՝ Կողոսացիների 1 և Եփեսացիների 6): Առաջին դարի մանրամասները հնարավոր է մեր համար կորած են, բայց ոչ հզոր և մխիթարող ճշմարտությունները: Երբ արդի արևմտյան մեկնաբանները փորձում են հարկադրել Հայտնության մանրամասները իրենց ժամանակակից պատմության մեջ, սխալ մեկնության ձևաչափը շարունակվում է:

Շատ հնարավոր է, որ գրքի մանրամասները դարձյալ դառնան խիստ բառացի (ինչպես ՀԿ-ը Քրիստոսի ծննդյան, կյանքի և մահվան վերաբերյալ) վերջին սերնդի հավատացյալների համար, երբ բախվեն հակա-Աստված առաջնորդի և նրա մշակույթի կատաղի գրոհին (տես՝ 2 Թեսաղոնիկեցիների 2): Ոչ ոք չի կարող իմանալ Հայտնության այս բառացի իրականացումների մասին մինչև որ Հիսուսի (տես՝ Մատթևոս 24, Մարկոս 13 և Ղուկաս 21) և Պողոսի խոսքերը (տես՝ 1 Կորնթացիների 15, 1 Թեսաղոնիկեցիների 4-5, և 2 Թեսաղոնիկեցիների 2) նույնպես դառնան պատմականորեն ակնհայտ: Կռահելը, ենթադրելը և դոգմատիզմը, բոլորն էլ անտեղին են: Ապոկալիպտիկ գրականությունը թույլ է տալիս այս ճկունությունը: Փառք Աստծուն պատկերների և սիմվոլների համար, որոնք գերազանցում են պատմական դեպքերին: Աստված է վերահսկում: Նա տիրում է, Նա գալու է: Տես՝ Դ. Բրենթ Սենդի, *Մաճեր և մանգաղներ. Սուրբգրային մարգարեության և հայտնության լեզվի վերանայում* (D. Brent Sandy, *Plowshares and Pruning Hooks: Rethinking the Language of Biblical Prophecy and Apocalyptic*):

Արդի մեկնությունների մեծամասնությունը բաց է թողնում ժանրի կարևորությունը: Արևմտյան ժամանակակից մեկնաբանները ավելի հաճախ փնտրում են աստվածաբանության հստակ, տրամաբանական համակարգ, քան հաշտվում հրեական ապոկալիպտիկ գրականության երկիմաստ, սիմվոլիկ, դրամատիկ ժանրի հետ: Այս ճշմարտությունը գեղեցիկ կերպով

արտահայտում է Ռալֆ Պ. Մարթինը իր հետևյալ հոդվածում. «Նոր Կտակարանի բացատրականի մոտեցումներ», *Նոր Կտակարանի մեկնություն* գրքում՝ խմբագրված Ի.Հովարդ Մարշալի կողմից.

«Մինչև որ մենք չգիտակցենք այս գրքի դրամատիկ առանձնահատկությունը և հիշենք այս լեզվի կիրառությանը կերպը որպես միջոց կրանական ճշմարտությունը փոխանցելու համար, մենք ցավալիորեն սխալվելու ենք Ապոկալիպսիսի մեր հասկացողության մեջ, և սխալ կերպով ենք փորձելու մեկնաբանել դրա տեսիլքները, կարծես թե այն գրական արձակի մի գիրք էր և նպատակ ուներ նկարագրելու էմպիրիկ և ժամանակագրական պատմության դեպքերը: Վերջին ընթացքը փորձելը նշանակում է բախվել մեկնությունների բոլոր խնդիրների հետ:Իսկ ավելի լուրջ այն առաջնորդում է հայտնության հիմնական նշանակության խեղաթյուրման և այդպիսով կորցնում է Նոր Կտակարանի այս հատվածի մեծ արժեքը որպես դրամատիկ հայտարարություն Քրիստոսի մեջ Աստծո ինքնիշխանության առասպելաբանաստեղծական լեզվով և այս իշխանության պարադոքսը, որը միաձուլում է զորությունն ու սերը (տես՝ Հայտն .5:5,6, Առյուծը Գառնուկն է): (էջ՝ 235)

Վ.Ռենդոլֆ Թեյթը իր Սուրբգրային մեկնությունների գրքում ասում է.

«Աստվածաշնչի ոչ մի ժանր այսքան ջերմեռանդորեն չի ընթերցվել նմանօրինակ հիասթափեցնող արդյունքներով, ինչպես ապոկալիպտիկ գրքերը՝ հատկապես Դանիելի և Հայտնության: Այս ժանրը գոյատևել է սխալ մեկնության սարսափելի պատնություն իր գրականական ժանրերի, կառուցվածքի և նպատակի ֆունդամենտալ սխալ հասկացողության պատճառով: Հենց իր այն պնդման համար, որ հայտնում է թե շուտով ինչ է տեղի ունենալու, ապոկալիպսը դիտարկվել է որպես ճանապարհի քարտեզ ապագայի մեջ: Այս տեսակետի ողբերգական ելքը այն ենթադրությունն է, որ գրքերի համարների շրջանակը գրված է հենց իր օրերում և ոչ թե հեղինակի: Այս սխալ ուղեցույց հանդիսացող մոտեցումը ապոկալիպսին (հատկապես Հայտնությանը) գործին վերաբերվում է այնպես, կարծես թե այն կրիպտոգրամ է, որի միջոցով մերօրյա դեպքերը կարող են օգտագործվել մեկնելու տեքստի սիմվոլը... Առաջին հերթին, մեկնաբանը պետք է գիտակցի, որ հայտնությունները փոխանցում են իրենց ուղերձները սիմվոլների միջոցով: Սիմվոլը, որը փոխաբերություն է հանդիսանում, տառացիորեն մեկնել նշանակում է սխալ մեկնել: Հարցն այն չէ, թե արդյոք դեպքերը, որոնք շարադրված են հայտնության տվյալ գրքում պատմական են, թե ոչ: Իրադարձությունները կարող են լինել պատմական. հնարավոր է դրանք իրականում տեղի են ունեցել կամ էլ տեղի կունենան, սակայն հեղինակը ներկայացնում է դեպքերը և փոխանցում նշանակությունը պատկերների և նախատիպերի միջոցով» (էջ՝ 137):

Սուրբգրային Պատկերների Բառարան գրքից, խմբագրված Ռայթեն, Ուլիոսթ և Լոնգմեն III-ի կողմից.

«Մերօրյա ընթերցողները հաճախ են զարմանում և վախենում այս ժանրից: Չսպասված նկարագրությունը և այս աշխարհից դուրս փորձառությունները տարօրինակ են թվում Սուրբ Գրքի մյուս հատվածների համեմատությամբ: Այս գրականությունը բառացիորեն ընդունող ընթերցողները կանգնում են հետևյալ որոշման առջև, թե «ինչը երբ տեղի կունենա», դրանով իսկ բաց թողնելով հայտնության ուղերձի առանցքային նշանակությունը» (էջ՝ 35):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (Աստծո Արքայությունը որպես ներկա, թեև ապագայում)

Աստծո արքայությունը ներկա է, թեև ապագայում: Այս աստվածաբանական պարադոքսը կենտրոնանում է էսկատոլոգիայի նպատակի վրա: Եթե մարդը ակնկալում է ՀԿ-ի բոլոր մարգարեությունների տառացի իրականացում, ապա Թագավորությունը դառնում է հիմնականում Իսրայելի վերականգնումը իր աշխարհագրական դիրքին և աստվածաբանական գերակայությանը: Սա պետք է պարտադրեր, որ Եկեղեցին հափշտակվեր Հայտնություն 5-ում և մյուս բոլոր գլուխները առնչվեին միայն Իսրայելին (բայց նկատի առեք Հայտն.22:16):

Սակայն, կենտրոնացումը թագավորության վրա է, որը մեկնարկը տվել է ՀԿ-յան խոստացված Մեսիայով, ապա այն ներկա է Քրիստոսի առաջին գալստյամբ, և հետո կենտրոնացումը դառնում է Քրիստոսի մարմնացումը, կյանքը, ուսմունքները, մահը և հարությունը: Աստվածաբանական շեշտադրությունը ներկայիս փրկության վրա է: Թագավորությունը եկել է, ՀԿ-ը կատարվել է բոլորի համար Քրիստոսի կողմից փրկության առաջարկով, և ոչ թե որոշ մարդկանց վրա Իր հազարամյա թագավորությամբ:

Անշուշտ ճիշտ է, որ Աստվածաշունչը խոսում է Քրիստոսի երկու գալուստների մասին, սակայն որտե՞ղ պետք է դրվի շեշտադրությունը: Ես կարծում եմ, որ ՀԿ-յան մարգարեություններից շատերը կենտրոնանում են առաջին գալստյան վրա՝ Մեսիական Թագավորության հաստատման վրա (տես՝ Դանիել 7): ՀԿ-ում կենտրոնացումը Աստծո հավիտենական թագավորության վրա է, մինչդեռ այդ թագավորության դրսևորման մեխանիզմը եղավ Մեսիայի ծառայության միջոցով (տես՝ 1 Կորնթ. 15:25-27): Հարցն այն չէ, թե որն է ճիշտ. երկուսն էլ ճիշտ են, սակայն ո՞րն է շեշտադրված: Պետք է ասել, որ որոշ մեկնաբաններ այնքան են կենտրոնանում Մեսիայի հազարամյա թագավորության վրա (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱԶԱՐԱՄՅԱՆ</u>), որ բաց են թողնում Հոր հավիտենական թագավորության սուրբգրային կենտրոնացումը: Քրիստոսի թագավորությունը նախնական իրադարձություն է: Ինչպես որ Քրիստոսի երկու գալուստները ակնհայտ չէին ՀԿ-ում, այնպես էլ Մեսիայի ժամանակավոր իշխանությունը:

Հիսուսի ուսմունքների և քարոզչության առանցքը Աստծո թագավորությունն է: Այն թե՛ ներկա է (փրկության և ծառայության մեջ) և թե՛ ապագա (համատարած և զորությամբ): Հայտնությունը, եթե կենտրոնանում է Մեսիայի հազարամյա թագավորության վրա (տես՝ Հայտնություն 20), նախնական է, ոչ վերջնական (տես՝ Հայտնություն 21-22): ՀԿ-ից հայտնի չէ, թե ժամանակավոր իշխանությունը անհրաժեշտություն է. իրականում Դանիել 7-ի Մեսիական թագավորությունը հավիտենական է, ոչ թե հազարամյա:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ</u>

ՎԵՑԵՐՈՐԴ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (Քրիստոսի մոտալուտ վերադարձը ի դեմս ուշացած *Parousia*)

Հավատացյալներից շատերին սովորեցրել են, որ Հիսուսը շուտով գալու է՝ հանկարծակի, անսպասելի (տես՝ Մատթ. 10:23, 24:27, 34, 44, Մարկ. 9:1, 13:30, Հայտն. 1:1,3, 2:16, 3:11, 22:7, 10, 12, 20, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇՈՒՏՈՎ ՎԵՐԱԴԱՐՁԻՐ</u>): Սակայն հավատացյալների յուրաքանչյուր սպասող սերունդ մինչև հիմա սխալվել է: Հիսուսի վերադարձի հրատապությունը (անմիջապես) հզոր խոստացված հույս է յուրաքանչյուր սերնդի համար, սակայն իրողությունը պատկանում է մի սերնդի (և դա հալածված սերունդն է): Հավատացյալները պետք է ապրեն այնպես, կարծես թե Նա վաղն է գալու, սակայն ծրագրեն և կիրառեն Մեծ Հանձնարարությունը (տես՝ Մատթ. 28:19-20), եթե Նա հապաղի:

Ավետարանում առկա որոշ հատվածներ և 1 ու 2 Թեսաղոնիկեցիները հիմնված են ուշացած Երկրորդ Գալստյան վրա (*Parousia*): Կան մի քանի պատմական դեպքեր, որոնք առաջինը պետք է տեղի ունենան.

1. Համաշխարհային ավետարանչությունը (տես՝ Մատթ. 24:14, Մարկ. 13:10)
2. «Անօրենության մարդու» հայտնությունը (տես՝ Մատթ. 24:15, 2 Թեսաղոնիկեցիների 2, Հայտնություն 13)
3. մեծ հալածանքը (տես՝ Մատթ. 24:21, 24, Հայտնություն 13)

Դիտավորյալ անորոշություն կա (տես՝ Մատթ.24:42-51, Մարկոս 13:23-36): Ապրե՛ք ձեր յուրաքանչյուր օրը այնպես, կարծես թե վերջինն է, սակայն ծրագրե՛ք և մարզվե՛ք հետագա ծառայության համար:

ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՇԱՑԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

Պետք է ասել, որ էսկատոլոգիական մեկնությունների արդի տարբեր դպրոցները բոլորն էլ պարունակում են կես ճշմարտություններ: Նրանք լավ են բացատրում և մեկնում մի քանի տեքստեր: Խնդիրն ընկած է կայունության և հավասարակշռության մեջ: Հաճախ առկա են մի շարք կանխաենթադրություններ, որոնք գործածում են սուրբգրային տեքստը լրացնելու աստվածաբանական կմախքը: Աստվածաշունչը չի հայտնում տրամաբանական, ժամանակագրական, համակարգված էսկատոլոգիա: Այն նման է ընտանեկան ալբոմի: Նկարները իրական են, սակայն ոչ միշտ են հերթականությամբ, համատեքստի մեջ, տրամաբանական հաջորդականությամբ: Նկարներից մի քանիսը ընկել են ալբոմի միջից, և ընտանիքի անդամների հետագա սերունդները ստույգ չգիտեն, թե ինչպես հետ դնեն իրենց տեղերը: Հայտնության ճիշտ մեկնաբանության բանալին բնագրի հեղինակի մտադրությունն է ինչպես որ հայտնված է իր ընտրած գրական ժանրի միջոցով: Շատ մեկնաբաններ փորձում են առաջ տանել իրենց ընտրած բացատրական գործիքներն ու ընթացակարգերը ՆԿ-ի մյուս ժանրերից Հայտնության իրենց մեկնաբանության մեջ: Նրանք կենտրոնանում են ՀԿ-ի վրա, փոխանակ թույլ տան Հիսուսի և Պողոսի ուսմունքները կառուցեն աստվածաբանական կառույցը և թույլ տան Հայտնությունը գործի որպես լուսաբանող: Տես Ֆիի և Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով*, էջ՝ 249-264:

Ես պետք է ընդունեմ, որ Հայտնության գրքի մեկնությանը մոտենում են որոշակի երկյուղով և սրտի թրթիռով, ոչ թե Հայտն.22:18-19-ի անեծքի պատճառով, այլ Աստծո ժողովրդի մեջ այս գրքի մեկնությունների պատճառած հակասությունների մակարդակի, որ եղել է և դեռ շարունակում է: Ես սիրում եմ Աստծո հայտնությունը: Ճիշտ է, երբ բոլոր մարդիկ սուտ են (տես՝ Հռոմ.3:4, տես՝ ՀԱՅՈՒԿ ԹԵՄԱ.ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ (յուրահատկությունն ու ներշնչանքը)): Խնդրում եմ օգտագործե՛ք իմ բացատրական մեկնությունները որպես փորձ մտածելու առիթ հանդիսացող և ոչ թե հաստատություն, որպես ճանապարհային նշան և ոչ թե ճանապարհի քարտեզ, որպես «ինչ կլինի եթե», և ոչ թե «այսպես է ասում Տերը»: Ես դեմ առ դեմ բախվել եմ իմ պակասությունների, հակումներ և աստվածաբանական դիրքորոշումների հետ: Նաև տեսել եմ նույնը այլ մեկնաբանների մեջ (տես՝ *Հայտնության գրքի շուրջ չորս տեսակետներ*, 1998, և *Հազարամյայի նշանակությունը*, մի քանի հեղինակներ, 1977): Կարծես թե մարդիկ Հայտնության գրքի մեջ գտնում են այն, ինչ ակնկալում են գտնել: Ժանրը իրեն մատնում է չարաշահման: Սակայն այս գիրքը նպատակով է հայտնվել Սուրբ Գրքում: Իր տեղը որպես «ամփոփիչ» խոսք պատահական չէ: Այն խոսք ունի Աստծուց յուրաքանչյուր սերնդի Իր որդիների համար: Աստված ուզում է, որ մենք հասկանանք: Եկե՛ք ձեռք ձեռքի տանք և ոչ թե կազմենք առանձին ճամբարներ . եկե՛ք հաստատենք այն, ինչը հստակ է և կարևոր, և ոչ թե այն ինչը հնարավոր է որ այդպես է, կարող է ճիշտ է: Աստված մեզ բոլորի՛ս օգնական:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:1-6

[1]Չարագործների պատճառով մի՛ խռովվիր
Ու անօրենություն գործողներին մի՛ նախանձիր,
[2]Քանի որ շատ շուտով հնձվելու են խոտի պես
Ու կանաչ խոտի պես թառամելու են:

[3]ՏԻՐՈ՛Ջը հուսա և բարությո՛ւն արա,
Որպեսզի երկրի վրա բնակվես ու իսկապես լիանաս:
[4]Նաև ՏԻՐՈՋՈՎ հրճվիր, և Նա քեզ կտա սրտիդ փափագները:
[5]ՏԻՐՈՋԸ հանձնի՛ր ճամփադ ու Նրան վստահի՛ր,
Եվ Նա կիրագործի այն:
[6]Եվ քո արդարությունը դուրս կբերի լույսի պես
Ու քո իրավունքը՝ կեսօրվա պես:

37:1-4 Այս պարբերությունը ունի յոթ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ և երեք ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ: Սրանք աղոթքներ չեն, այլ զգուշացումներ հավատարիմներին (այսինքն՝ ինչ անել և ինչ չանել):

1. մի՛ խռովվիր – BDB 354, KB 351, *Hithpael* ՀԱՅՑԱԿԱՆ, նույն ձևաչափը Սաղմ.37:7, 8, ուշադրություն դարձրե՛ք Առակ.24:19, այս բառը նշանակում է «վառվել» կամ «մխալ» և կիրառվում է փոխաբերական իմաստով բարկության համար. այստեղ այն զուգորդվում է «նախանձ» բառի հետ (BDB 888):
2. մի՛ նախանձիր – BDB 888, KB 1109, *Piel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ.73:3, Առակ.3:31, 23:17, 24:1, 19

Ամբարիշտների կյանքը հաջողակ և երջանիկ է երևում, սակայն դրանք կարճ են տևում. նրանք ի վերջո չեն ժառանգելու խոստացված երկիրը:

1. Նրանք խոտի պես շուտով չորանալու են – BDB 576, KB 593, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Հոբ 14:2, Սաղմ.90:5-6, 103:15-16, Ես.40:6-8
2. նրանք կանաչ խոտի պես թառամելու են – BDB 615, KB 663, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Անհավատների անցողիկության լույսի ներքո, հավատարիմ հետևորդները պետք է (37:3-5 ունի 7 ՀՐԱՄԱՅԱԿԱՆ)՝

1. վստահեն ՅԱՀՎԵԻՆ – BDB 105, KB 120, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.37:3,5, Սաղմ. 52:8, 62:8, Առակ.3:5-6
2. բարիք գործեն – BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. բնակվեն երկրի վրա – BDB 1014, KB 1496, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. հավատարմություն ցուցաբերեն – BDB 944, KB 1258, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. հրճվեն ՅԱՀՎԵՈՎ – BDB 772, KB 851, *Hithpael* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ ոչ թե ֆիզիկական բարգավաճմամբ)
6. իրենց ճանապարհը հանձնեն ՅԱՀՎԵԻՆ – BDB 164, KB 193, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
7. վստահեն ՅԱՀՎԵԻՆ – նույնը ինչ առաջին կետը

ՅԱՀՎԵՆ՝

1. կտա (BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) հավատարիմ հետևորդին իր «սրտի փափագները», Սաղմ.37:4
2. «Նա կիրագործի այն» (BDB 793, KB 889, *Qal* ԱՆԿԱՏԱՐ), Սաղմ.37:5
3. Նա քո արդարությունը դուրս կբերի լույսի պես
4. Եվ քո արդարությունը կեսօրվա պես (3 և 4 կետերը զուգահեռներ են և կարծես թե նկատի ունեն դատական ընթացք կամ վերջին ժամանակի դատաստանի փոխաբերություն է)

37:4բ Պոեզիայի այս տողը անձնապես ինձ համար միշտ շատ բան է նշանակել, սակայն ես վստահ չեմ, որ այն ճիշտ եմ մեկնաբանել: Սովորաբար ես սա կիրառում եմ պնդելու, որ եթե մենք հավատարիմ հետևորդ ենք, ապա մենք կփափագենք ճիշտ բաներ, քանի որ ՅԱՀՎԵՆ է մեր սրտին թելադրում (տես՝ Երեմ.31:31-34, Եզեկ.36:26-27): Սակայն անշուշտ այն կարող է նաև վերաբերել հավատարիմ հետևորդի պատասխանված աղոթքներին (տես՝ Սաղմ.20:4-5, 21:2, 145:19, Մատթ. 7:7-8): Աստվածաբանական խնդիրը Աստծո ինքնիշխանության և մարդու ազատ կամքի միջև փոխկապակցվածությունն է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ, NIDOTTE, հատոր 3, էջ՝ 444): Երբեմն մանրամասն էզզեգետիկան փչացնում է լավ քարոզը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:7-11

[7]Հանգստացի՛ր ՏԻՐՈՋ մեջ ու համբերությամբ Նրա՛ն սպասիր.
Մի՛ խռովվիր իր ճանապարհով հաջողություն գտնողի պատճառով,
Խաբեությամբ գործ անող մարդու պատճառով:
[8]Դադարի՛ր բարկանալուց, վե՛րջ տուր զայրանալուն.
Մի՛ խռովվիր, որպեսզի չարիք չգործես:
[9]Քանի որ չարագործները կորչելու են,
Սակայն ՏԻՐՈՋԸ սպասողները երկիրն են ժառանգելու:
[10]Քանի որ կարճ ժամանակ ևս, և ամբարիշտը կչքանա,
Կփնտրես նրա տեղն ու չես գտնի:
[11]Սակայն հեզերը կժառանգեն երկիրը
Ու խաղաղության առատությամբ կուրախանան:

37:7-11 Սա նախորդ պարբերության շարունակությունն է:

1. զգուշացում հավատարիմներին
   ա. հանգստացի՛ր ՅԱՀՎԵԻ մեջ – BDB 198, KB 226, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   բ. համբերությամբ սպասիր Նրան – BDB 296, KB 297, *Hithpolel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ ՅԱՀՎԵԻՆ, որ գործի ժամանակի մեջ և էսկատոլոգիապես)
   գ. մի՛ խռովվիր – նույնը ինչ 37:1
   դ. դադարի՛ր բարկանալուց – BDB 951, KB 1276, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (այսինքն՝ մի՛ փորձիր վրեժխնդիր լինել)
   ե. թող բարկությունը – BDB 736, KB 806, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   զ. մի՛ խռովվիր – նույնը ինչ 37:1,7
2. Քանի որ անհավատի ճակատագիրը հստակ է՝
   ա. նրա բարգավաճումը կտրվելու է (այսինքն՝ մահ)
   բ. ամբարիշտը տեղ չի ունենալու (ինչպես դաշտի ծաղիկները իրենց ժամանակից դուրս)
3. հետևաբար, հավատարիմը (այսինքն՝ նրանք, ովքեր սպասում են ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ. 37:9բ)
   ա. կժառանգեն երկիրը, տես՝ Սաղմ. 37:9, 11, 22, 29, 34, տես՝ Համատեքստային Հասկացություններ, Դ գրառումը
   բ. խաղաղության՝ բարգավաճման առատությամբ կուրախանան

37:7 «համբերությամբ սպասիր» MT տալիս է բառացի «պտտվիր», «պարիր», «կծկվիր» (այսինքն՝ ցավից) ԲԱՅԸ (BDB 296 I, KB 297): Այն կիրառվում է Հոբ 35:14-ում «սպասելու» իմաստով (*Polel*): Միայն այստեղ Սաղմ. 37:7-ում (*Hithpolel*) այն նշանակում է «համբերությամբ սպասել»: Այս խոսքի պատճառով NET Աստվածաշունչը (տես էջ՝ 895, #9) առաջարկել է շտկում մեկ այլ եբրայերեն արմատով (այսինքն՝ לחיל-ի հետ, BDB 403, *Hiphil*):

37:9 Այստեղ դարձյալ ունենք Աստծո ինքնիշխանության և կանխագիտության վրա ՀԿ-յան շեշտադրությունը (տես՝ Սաղմ. 37:23):Ամբողջ պատմությունը ներկայի պես է Նրա առաջ: Հավատարիմ հետևորդները կարող են վստահել, որ՝

1. անցյալը ներված է
2. ներկան՝ լիազորված
3. ապագան՝ երաշխավորված

37:10 «կարճ ժամանակ ևս» Սա եբրայերեն նկարագրություն է նախասահմանված դեպքերի համար: ՅԱՀՎԵՆ է վերահսկում ժամանակը: Գոյություն ունի ծրագիր, նպատակ, և արդար վախճան: Արդարությունը հաղթանակելու է վերջում և ամբարշտությունը բացահայտվելու է, դատվելու, և հեռացվելու (տես՝ Սաղմ. 37:13):

37:11 «հեզերը կժառանգեն երկիրը/հողը» Այս համարը Հիսուսը մեջբերեց Մատթ.5:5-ի երանիների շարքում (LXX-ից), որտեղ «հող» բառը փոխարինվել է «երկիր» բառով (տես՝ Համատեքստային Հասկացություններ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ.ՀՈՂ, ԵՐԿԻՐ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:12-15
[12]Ամբարիշտը արդարի դեմ դավ է լարում
Ու նրա վրա կրճտացնում է ատամները:
[13]ՏԵՐԸ ծիծաղելու է նրա վրա, որովհետև տեսնում է նրա օրհասը:
[14]Ամբարիշտները սուր քաշեցին ու լարեցին աղեղները՝
Աղքատին ու կարիքավորին տապալելու համար,
Եվ ուղիղ ճանապարհով ընթացողներին սպանելու համար:
[15]Նրանց սուրն իրենց սիրտն է մտնելու
Ու նրանց աղեղները կոտրտվելու են:

37:12-15 Ամբարշտի գործերը հավատարիմի դեմ և ՅԱՀՎԵԻ պատասխանը՝
1. Ամբարիշտը՝
   ա.դավ է լարում արդարի դեմ
   բ.ատամներն է կրճտացնում, տես՝ Հոբ 16:9, Սաղմ.35:16, Ողբ 2:16, Գործք 7:54
   գ.սուր քաշեցին
   դ. աղեղներ լարեցին՝
      1) խեղճին տապալելու
      2) աղքատին տապալելու
      3) ուղիղին սպանելու
2. ՅԱՀՎԵԻ պատասխանը՝
   ա.Նա ծիծաղում է նրա/նրանց վրա, տես՝ Սաղմ.2:4, 59:8
   բ. Նա տեսնում է նրա/նրանց օրհասը (այսինքն՝ դատաստանի)՝ թե՛ ժամանակավոր, և թե՛ հավիտենական
   գ. նրանց սուրը մտնելու իրենց իսկ սիրտը (ՅԱՀՎԵԻ կողմից հակադարձում)
   դ. նրանց աղեղը ջարդվելու է (ՅԱՀՎԵԻ կողմից հակադարձում)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:16-22
[16]Արդարի ունեցած քիչն ավելի լավ է,
Քան շատ ամբարիշտների ճոխությունը:
[17]Քանի որ ամբարիշտների բազուկները ջարդվելու են,
Բայց ՏԵՐՆ արդարներին նեցուկ է լինում:
[18]ՏԵՐԸ գիտի ուղիղների օրերը.
Եվ նրանց ժառանգությունը հավիտյան է լինելու:
[19]Չար ժամանակներում չեն ամաչելու
Ու սովի օրերում բավարարված են լինելու:
[20]Իսկ ամբարիշտները կորչելու են,
Եվ ՏԻՐՈՋ թշնամիները գառնուկի ճարպի պես են լինելու,
Սպառվելու են, ցնդելու են ծխի պես:
[21]Ամբարիշտը փոխ է առնում ու չի վերադարձնում,
Իսկ արդարը ողորմում ու տալիս է:
[22]Քանի որ նրա օրհնածներն են ժառանգելու երկիրը,
Իսկ նրա կողմից անիծվածները կորչելու են:

37:16-22 Այս պարբերությունը հակադրությունների շարան է (հակասական զուգորդումներ):
1. Սաղմոս 37:16
   ա.արդարի ունեցած քիչն ավելի լավ է (տես՝ Առակ.15:16-17, 16:8, 28:6, սա աստվածաբանական բալանսն է 37:25-ի համար)

բ. քան շատ ամբարիշտների ճոխությունը (այսինքն՝ մի խռովվիր ամբարշտի թվացյալ բարգավաճման պատճառով, 37:1-2)

2. Սաղմոս 37:17
   ա. ամբարիշտների բազուկները ջարդվելու են
   բ. ՅԱՀՎԵՆ պահպանելու է արդարին
3. Սաղմոս 37:18-20
   ա. ուղիղները, Սաղմ. 37:18-19
      1) ՅԱՀՎԵՆ գիտի նրանց օրը
      2) նրանց ժառանգությունը լինելու է հավիտենական
      3) չար ժամանակներում նրանք չեն ամաչելու
      4) սովի ժամանակ նրանք առատություն են ունենալու
   բ. ամբարիշտը՝
      1) կորչելու են
      2) ցնդելու են (MT անհայտ է, համատեքստը առաջարկում է ինչպես գարնան ծաղիկները, տես՝ Սաղմ. 37:2)
4. Սաղմոս 37:21
   ա. ամբարիշտը փոխ է առնում և չի վերադարձնում
   բ. արդարը ողորմած է և տալիս է
5. Սաղմոս 37:22
   ա. ՅԱՀՎԵԻ կողմից օրհնվածները ժառանգելու են երկիրը
   բ. ՅԱՀՎԵԻ կողմից անիծվածները կորչելու են

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:23-26
23Բարի մարդու քայլերը սահմանվում են ՏԻՐՈՋ կողմից,
Ու Նա հավանում է նրա ճանապարհը:
24Եթե անգամ ընկնի, ամբողջովին չի կործանվի,
Քանի որ ՏԵՐԸ բռնելու է նրա ձեռքը:
25Մանուկ էի և ծերացա, բայց չտեսա, որ արդարը լքված լինի
Կամ էլ նրա զավակը, հաց մուրալիս:
26Միշտ ողորմում է ու փոխ տալիս
Եվ նրա սերունդն օրհնված է:

37:23-26 Այս պարբերությունը նկարագրում է հավատարիմ հետևորդներին՝

1. նրա քայլերը սահմանվում են ՅԱՀՎԵԻ կողմից
2. ՅԱՀՎԵՆ հավանում է նրա ճանապարհը
3. երբ նա ընկնում է՝
   ա. չի կործանվի
   բ. քանի որ ՅԱՀՎԵՆ բռնում է նրա ձեռքից (սրբերը ժամանակ առ ժամանակ փխվում են, բայց ոչ ՅԱՀՎԵՆ)
4. սաղմոսերգուն (կյանքի փորձառությամբ) երբեք չի տեսել, որ արդարը լքված լինի
5. սաղմոսերգուն երբեք չի տեսել, որ նրանց ժառանգները հաց մուրալիս լինեն
6. նա ողորմած է և փոխ է տալիս
7. նրա ժառանգները օրհնություն են

37:25 Սա ՀԿ-յան պատկեր է՝ հիմնված Մովսիսական ուխտի վրա (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30): Սա չի նշանակում, որ այսօր պետք է այս խոսքը մեկնաբանվի որպես թե, աղքատ ու կարիքավոր մարդիկ չեն կարող լինել հավատացյալներ» Ուխտերը փոխվել են, տես՝ Համատեքստային Հասկացություններ, Դ: Այս համարի շուրջ համառոտ գեղեցիկ քննարկման համար տես՝ *Աստվածաշնչի խրթին խոսքերը*, էջ՝ 267-268:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:27-34

[27]Հե՛տ կանգնիր չարից ու բարի՛ք արա
Եվ հավիտյան ապրիր:
[28]Քանի որ ՏԵՐԸ սիրում է իրավունքը և Իր սրբերին չի լքում.
Նրանք հավիտյան պահպանվում են,
Իսկ ամբարիշտների սերունդը կորչելու է:
[29]Արդարներն են ժառանգելու երկիրը
Ու հավիտյան բնակվելու են նրա մեջ:
[30]Արդարի բերանն իմաստություն է խոսում,
Ու նրա լեզուն իրավունքն է հայտնում:
[31]Իր Աստծո օրենքն իր սրտի մեջ է
Եվ նրա քայլերը չեն սայթաքելու:
[32]Ամբարիշտը դիտում է արդարին
Ու հետամուտ է նրան սպանելու:
[33]Սակայն ՏԵՐԸ նրա ձեռքում չի թողնի նրան
Եվ դատվելիս՝ չի դատապարտի նրան:
[34]Սպասի՛ր ՏԻՐՈՋԸ ու պահի՛ր Նրա ճամփան,
Եվ Նա քեզ կբարձրացնի՝ երկիրը ժառանգելու համար.
Երբ ամբարիշտները կործանվեն,
Դու կտեսնես դա:

37:27-37 Այս պարբերությունը, ինչպես Սաղմ.37:1-6 ունի մի քանի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ (5), որոնք զգուշացնում են հավատարմներին: Սա ևս մեկ պարբերություն է, որը նկարագրում է հավատարիմ հետևորդների գործողությունները:

1. զգուշացումներ՝ խրատներ (այսինքն՝ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ)
   ա. հե՛տ կանգնիր չարից, Սաղմ.37:27 – BDB 693, KB 747, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   բ. բարի՛ք արա, Սաղմ.37:27 – BDB 793, KB 889, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.37:3
   գ. հավիտյան ապրի՛ր, Սաղմ.37:27 – BDB 1014, KB 1496, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.37:18,29
   դ. սպասի՛ր ՅԱՀՎԵԻՆ, Սաղմ.37:34 – BDB 875, KB 1082, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ.37:9
   ե. պահի՛ր Նրա ճանապարհը, Սաղմ.37:34 – BDB 1036, KB 1581, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. զգուշացումների պատճառները՝
   ա. ՅԱՀՎԵՆ սիրում է արդարությունը
   բ. ՅԱՀՎԵՆ չի թողնում Իր աստվածավախներին
   գ. նրանք հավիտյան են պահվում
   դ. նրանք ժառանգելու են երկիրը
   ե. նրանք բնակվելու են հավիտյան երկրի վրա
   զ. նրանք իմաստություն՝ արդարություն են խոսում
   է. նրանք Աստծո օրենքը իրենց սրտերում են պահում
   ը. նրանց ոտքերը չեն սայթաքելու
   թ. ՅԱՀՎԵՆ չի լքելու նրանց
   ժ. նա/նրանք դատաստանի ժամանակ չեն դատապարտվելու

Ուխտի մեջ մտած հավատացյալ լինելը փոխում է մարդու կյանքի, շարժառիթների և հույսերի բոլոր ասպեկտները: Արմատական մեծ տարբերություն կա հավատարիմ հետևորդի և անհավատի միջև: Անհավատ մարդը կարող է լինել՝

1. կռապաշտ
2. անհնազանդ ուխտի մարդ
3. գործնական աթեիստ

4. անտարբեր՝ անզգա հետևորդ
5. ագրեսիվ հարուստ մարդ
6. անազնիվ քաղաքական գործիչ

Սաղմ. 37:32-ում նա նկարագրվում է որպես մեկը, որը (տես՝ Սաղմ. 35-40 պարբերությունը)՝

1. լրտեսում է արդարին
2. փնտրում է նրան/նրանց սպանել

37:28 «նրանք հավիտյան պահպանվում են» LXX-ը սա փոխում է «չարագործները կցրվեն»: Սա առաջարկվում է ակրոստիկոսի կառուցվածքը պահպանելու համար (այսինքն՝ *ային* տառը) և համապատասխանեցնելու հանգավորմանը:

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 225) MT տարբերակին տալիս է "B" գնահատական (որոշակիորեն կասկածելի):

1. MT - נשמדו
2. LXX – נשדו (NEB, NJB, REB)

37:31 «Աստծո օրենքը» Այս տերմինը (BDB 435) այն մի քանի տերմիններից է, որոնք բնութագրում են ՅԱՀՎԵԻ հայտնությունը Իսրայելին:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ</u>

❖ **«իր սրտում»** Սա Աստծո հայտնության (այսինքն՝ սրտի վրա Աստծո գրված Օրենքի) ներքինացումը՝ անձնականացումն է և Երեմ. 31:31-34-ի «նոր ուխտի» նշանն է:

❖ **«նրա քայլերը չեն սայթաքելու»** Աստվածահաճո կյանքը փոխաբերորեն նկարագրվում է որպես ուղիղ ճանապարհ, բարձրավանդակ, անարգել արահետ, հստակ նշված ուղի (տես՝ Սաղմ. 37:34ա, «Նրա ճամփան», տես՝ Սաղմ. 1:1-ի գրառումը): Հակառակը կլինի՝

1. քայլերը սայթաքում են
2. տողմոտ կավի մեջ
3. գայթակղվում է

ՆԿ-ում նույնպես կարելի է գտնել այս նույն նկարագրությունը (այսինքն՝ «քայլելը», տես՝ Եփես. 4:1, 17, 5:2, 15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 37:35-40
35Տեսա ամբարշտին շատ զորացած
Ու մի կանաչ դափնու պես տարածված:
36Բայց նա անցավ ու ահա չկա,
Իսկապես, փնտրեցի նրան, բայց չգտնվեց:
37Նկատի՛ր կատարյալ մարդուն և նայի՛ր շիտակին,
Քանի որ այդ մարդու վերջը խաղաղություն է:
38Իսկ անօրենները կորչելու են միատեղ:
Ամբարիշտների վախճանը կորուստն է լինելու:
39Իսկ արդարների փրկությունը ՏԻՐՈՋԻՑ է,
Նեղության ժամանակ Ինքն է նրանց զորությունը:
40Եվ ՏԵՐՆ օրհնելու է նրանց ու ազատելու է,
Նա ազատագրելու է նրանց ամբարիշտներից,
Փրկելու է նրանց, քանի որ նրանք Իրեն են վստահում:

37:35-40 Այս պարբերությունը ամփոփում է արդարի և ամբարշտի միջև հակադրությունը:

1. ամբարիշտը՝
   ա. դաժան՝ զորացած (բառացի՝ «ահ տարածող», BDB 792)

բ. տարածող (արագությամբ, BDB 947) իր ազդեցիկ զորությունը և վերահսկողությունը ինչպես դափնու ծառը երկրի վրա (MT անհայտ է)
գ. նրա օրերը հաշված են և նա այլևս չի գտնվելու
դ. նա/նրանք կորչելու են իրենց սերունդների հետ միասին (տես ստորև տրված գրառման #2 գ.)

2. Արդարը՝
   ա. նկատի՛ր (բառացի՝ «շարունակիր դիտել») կատարյալ մարդուն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՀԱՆՑԱՆՔ, ԱՌԱՆՑ ՆԱՊԱՏԻՆՔԻ) – BDB 1036, KB 1581, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   բ. նայի՛ր շիտակին – BDB 906, KB 1157, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   գ. այդ մարդու վերջը խաղաղություն է (կամ կյանքից հետո, կամ երեխաները)
   դ. նրանք ՅԱՀՎԵԻ կողմից փրկվելու են
   ե. ՅԱՀՎԵՆ նրանց զորությունն է նեղության ժամանակ
   զ. ՅԱՀՎԵՆ օգնում է նրանց
   է. ՅԱՀՎԵՆ ազատում է նրանց

Այս բոլորը պատահում է նրանց, քանի որ իրենց հույսը դնում են ՅԱՀՎԵԻ վրա:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս է այս սաղմոսը կապված Սաղմոս 49 և 73-ի և Հոբի գրքի հետ:
2. Ինչո՞ւ են մարդիկ բնութագրվում որպես դաշտի խոտ կամ ծաղիկ:
3. Ո՞րն է «վստահել» տերմինի ստուգաբանությունը և ո՞րն է դրա կարևորությունը մեր կյանքերի համար:
4. Ո՞րն է այս Սաղմոսի կենտրոնական թեման:
5. Ինչո՞ւ են Սաղմ. 37:16 և 24 այդքան կարևոր բալանս հանդիսանում ՀԿ-յան ավանդական իմաստության համար:
6. Այս Սաղմոսը սովորեցնում է ժամանակավո՞ր, թե էսկատոլոգիական դատաստանի մասին: Ինչո՞ւ: